ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Տեքսուորլդ ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/12 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
7	Բաճկոնը պետք է լինի «Սարժա» տեսակի մոխրագույն ջրադիմացկուն գործվածքից: Բաճկոնը պետք է կարված լինի երկերանգ (մուգ և բաց)՝ պարանոցի հետին մասը, թիկունքի և թևատակերի հատվածները լինեն մուգ գույնի, իսկ մնացած մասը բաց գույնի նույն տեսակի գործվածքից: Բաճկոնը պետք է լինի աստառով և սինտեպոնե ներդիրով՝ ջերմություն ապահովելու համար: Բաճկոնը բաղկացած է մեջքից, մինչև պարանոց բարձրացված օձիքից, թևքերից և լանջափեշերից, որոնք միացվում են շղթայով: Բաճկոնը գոտկատեղից վերև պետք է ունենա կողային երկու գրպաններ: Բաճկոնի կրծքավանդակի ձախ մասում պետք է լինի գրպանի իմիտացիա, այսինքն՝ «լեզվակ», որի վրա կրելու ժամանակ կամրացվի միասնական նմուշի անվանական կրծքանշանը: Բաճկոնի օձիգը հետևի մասում պետք է ունենա շղթայով թաքնված գլխանոց: Բաճկոնի թևերի կողային հատվածում մուգ գույնի կտորով կարված լինի գրպանի իմիտացիա: Բաճկոնի երկարությունը գոտկատեղից ներքև, թևերը մանժետներով՝ որոնք կարգավորվում են կպչուն ժապավենով, իսկ բաճկոնի ստորին հատվածը երկու կողմից ունենա թելերով կարգավորվելու հնարավորություն: Հանդերձանքի տեսքը տես՝ նկար 1-ում: Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Վաճառողը պարտավոր է Գնորդի պահանջով համաձայնեցման ներկայացնել մատակարարման ենթակա հանդերձանքի նմուշը: Հանդերձանքի նմուշը համաձայնեցնելուց հետո Գնորդի կողմից Վաճառողին կտրամադրվեն հանդերձանքի չափսերը: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով: Հակերը պիտակավորված: Պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու

	տարեթիվը։ Մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում արտոնագրված, հավաստագրված փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված եզրակացություն՝ Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի համապատասխանության վերաբերյալ։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/12 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
7	